Այս յիշատակարաններից ամենանշանաւորները գտնւում են Նոյնպէս Սպերի արեւելեան գաւառում՝ Կիսկիմում։ Սպերն ու Բաբերտոնը գուցէ անվնաս մեզ հասնէին, կամ չատ նուազ վնասուած լինէին, եթէ 1578ին Լալա Մուստաֆա՝ Փաշայի աւերածին չմատնուէին։ Լալա Փաշայի ենիչերական գունդը մտաւ եւ ամբողջ երեք ամիս հրեատանու ռումբերով եւ ականներով կործանեց Ճորոխի Աւազանի բերդերը, դղեակները ամրոցներն ու տաճարները։

Թէեւ Ֆաթիհ Մէհմէդ Բ. 1463ին Տրապիզոնին եւ 1473ին տիրել էր Բարձր-Հայ-

---

մերը, ամբողջ հասարակութիւնների գլուխն անցած՝ բարեկարգում էին ջրերի-առուների հոսանքը, ջրպետ քուրմերը այնպիսի լայնարձակ հասոյթներով էին հարստանում, որ ձեռք բերին Սպերի հանքերը եւ սկսեցին մշակել պղինձ եւ ուրիշ մետաղներ։ Այս հասոյթներով մոգերը հեռզհետէ բդեաշխներ են դառնում եւ հարստութիւնը-կարողութիւնը նրանց միջոց է տալիս արքաներ դառնալու։ Սպերի եւ Կիսկիմի բովերի շուրջը գտնուած հալոցները անչափ մոխրակոյտ են թողել, հալոցներից դուրս թափուած նիւթերը նորից քարացել են եւ այնպիսի քիմիական բաղադրութիւններ ունին, որ պէտք է ենթադրել, որ պղնձից սրանք էլ պատրաստել են լաջուր ներկը եւ արտահանել։

Բագրատունիների հարստութիւնը առասպելական համրաւ ունի, նրանք ոչ միայն գանձագին գնել են բազմաթիւ կալուածներ ոչ միայն Թորդում, Ուղտիք, Կիսկիմ, այլ եւ Այրարատում, Աղձնիքում եւ Ցարուբերանում։ Նրանք ոչ միայն կարաւաններ են ունեցել, արեւելքից արեւմուտք վաճառք են տարել ու բերել, այլ եւ մթերանոցներ են ունեցել մեծամեծ քաղաքներում եւ միջնորդներ են եղել մեծամեծ փոխանակութիւնների։